ՏԱՐԻ Չորեքշաբթի 22 Օգոստոս 19[illegible] Թիւ 839

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է։ Երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

—o—

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՑԻԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Չորեքշաբթի ԵՒ Շաբաթ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Դասակ եւ գրամ դրկել խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ„ Варна

Redaction du journal „Charjoum„ Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեկ տուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽՊԵՍ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրոշիւրը յանձնված է տպագրութեան։

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող դոկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր։

Դիմել «Շարժումի» Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժոզէֆ քարափին վրայ։ Կըստանայ զանազան հայերէն թերթեր։ Առ հասարակ բոլոր հայ կամարտելիքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն։ Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները։

ԱԶԴ

Խմբագրութեան եւ տպարանի փոխադրութեան պատճառով անցեալ շաբաթ օրը «Շարժումը լոյս չը տեսաւ։

Խմբագրութիւն

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Սերպիա.—Վտր Սոֆիայի Օհան...ի միջոցաւ ընդունեցինք ձեր երկու տարեկան բաժնեգիր 30 լեւ։

—Սոֆիա.—Դ. Օհան...—պ. Ս.ի միջոցաւ ընդունեցինք 33 լեւը։

—Ֆիլիպէ.—Պ Տ. "Իրաւունքի խմբագրութենէն ընդունեցինք ժամանակին 12 լեւ ձեր տարեկան բաժնեգինը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

Դաշնակցական գիտակից ընկերներից ոմանք կասկած են յայտնում թէ՝ գալիք Ընդհանուր Ժողովն էլ չը պէտք է կարողանայ Դաշնակցութիւնը կտել ձրիակեր և սիրող յեղափոխական տարրից, քանի որ իբրեւ պատգամաւորներ ընտրվում են սիրող տիպերը, հին ուղղութեան և դրութեան դպրոցում մարդ վածները, ես այդքան յոռետես չեմ. և դրա միակ պատճառը այն է որ հիմա տաճկահայ բուն գործի վայրերում աշխատած, մաքառած բուական թիւով ընկերներ կան դուրսը, որոնք կարող են և իրաւունք ունեն Ընդհանուր Ժողովին մասնակցել և երկրի պէտքերին յարմար պահանջներ դնել ընդհանուր ժողովի առջեւ. Անդրանիկի մասին ես արդէն կարծիք յայտնեցի... ու չեմ ուզում և մտածել որ Զարդարեաններ, ոսկեհանքի գործիչներ, Պոլսոյ գործիչներ, ան խղճութիւնը ունենան ուրանալու երկրում տառապող ժողովրդի պահանջները ինչոր անձնական չնչին շահերի կամ դիրութիւնների համար...

Սակայն այստեղ մի պայման կայ։ չուրանալը, երկրի շահերին չը դաւաճանելը դեռ բաւական չէ. այլեւ ամէն ճիգ պէտք է թափել ներկայ լինել ընդհանուր ժողովին. մինչեւ օրս Դաշնակցութեան ընդհանուր ժողովներում բուն գործի վայրից՝ տաճկահայ ինտէլիգէնտ, իրենց դատը պաշտպանելու ընդունակ, ոչ է ազդեցութեան չենթարկվող, անձնական շահերի տեսակէտով մարդիկ քիչ են գտնվել, և հիմա պէտք է այդ պակասը լրացնել։ Մի Զարդարեան, որոշ, դրական պահանջներով, երկրի իրական կացութիւնը պարզելով և այդ կացութեան յարմար պահանջներ դնելով ընդհանուր ժողովում աւելի մեծ օգուտներ կարող է տալ մեր յեղափոխական գործին. քան թէ տասը հատ «Ռազմիկ» վարելով։ Մի Ոսկեհանքի Անդրանիկ, իր բողոքի ըմբռնողութեամբ աւելի մեծ օգուտներ կալող է բերել ընդհանուր ժողովի մէջ, քան Վարնայի խմբերի գործերը կարգադրելով։ Մի ինտէլիգէնտ Սուրէն կարող է իր գիտակցութեամբը շեշտել այն վերքերը որոնք կաղեցրել են մեր յեղափոխական գործը։ Մի Էշուար—Սիսակ աւելի օգտակար կը լինի ընդհանուր ժողովում, քան Ամերիկայում։ Մի Արամ—Աշոտ, փոխանակ Պարիզում «նոր—հանդէսը» վարելու, պէտք է շտապէ դէպի ընդհանուր ժողով։ Սրանք բոլորն էլ իրաւունք ունեն Ընդհանուր Ժողովին մասնակցելու, գործիչի իրաւունքով.. իմ կարծիքով դա տաճկահայ գործիչների գործնական և մտաւոր, որոնց վրայ պէտք է աւելցնել և Կարիճին և Աղասէրին, մի յեղափոխական սիրուն խումբ կը լինի որը կարողութիւնը կունենայ տաճկահայաստանի յեղափոխական գործը հաստատուն, նպատակայարմար հիմերի վրա դնելու։

Արամ—Աշոտ, Կարիճ. Աղասէր, Զարդարեան, Սուրէն, Ոսկեհանքի Անդրանիկ, Էշուար—Սիսակ յենված Սասունի Անդրանիկի գործնական հեղինակաւորութեան վրա, եթէ ուզենան Դաշնակցութիւնը ալմատակսն վերանորոգման կը ենթարկեն մանաւանդ որ դրանք էլ ենց հետ կունենան և տաճկահայ դատին ամբողջովին նուիրված ուսահայ գործիչներ։ Միթէ կասկածե՞նք որ դրանք իրենց պարտականութիւնը չը պէտք է կատարեն. միթէ հաւատա՞նք որ երկիրը կրկին պէտք է ներկայացնեն խեղճ ու կրակ գործիքները։ Ոչ, մենք հաւատում ենք որ վերը լիչած պարոնները իրենց պարտականութիւնը պէտք է կատարեն. հակառակ պարագային Դաշնակցութեան յարատեւութիւնը միայն և միայն ֆլասակար պէտք է լինի տաճկահայ ազատագրութեան գործին, իսկ վերոյիշեալ պարոնները ֆլասակար կազմակերպութեան գիտակից յենարանները իրենց ծուլութեան, անտարբերութեան, ոչ անձնազոհութեան շնորհիւ։

ՎԱՐՈ

ՀԱՅ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ

„Աստուած վկայ որ մենք կը յաղթէինք. թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք։»

Բանաստեղծութիւնն ուրիշ բան չէ. բայց եթէ հոգու զգացման արտայայտութիւնը, որ ստէպ հեռի չէ ճշմարիտ իրականութենէ. և շատ անգամ մոտիկ՝ մոլգարէութեան։ Հին մարգարէներն ալ իրենց ժամանակին բանաստեղծներն էին, բայց միայն ներշնչուած։ Ո՞վ կարող է պնդել. թէ՝ մեր մեծ բանաստեղծն ալ՝ որ վերեւի երկու տողը գրեր է ներշնչուած չէր. քանի որ զայն հաստատելու ապացոյցներ ունինք։ Ես իմ պատանեկական և երիտասարդական վերացականօրէն գրած բանաստեղծութիւններէս շատերուն իրականացումն եմ տեսած. երբ. գրուելէն շատ տարիներ վերջը. և գուցէ շատեր ալ ինձ նման ունենան այս փորձառութիւնը։

Ցաւենայն դէպս՝ բանաստեղծութիւն մը՝ գրուած զօրաւոր ներքին մղումէ և անկեղծ զգացումէ. ունի իւր մեծ նշանակութիւնը, որպէս վերեւի երկու տողը,—Աստուած վկայ որ մենք կը յաղթէինք թէ՝ մէկ անձնուրաց մարդ ունենայինք.—մարդ անձնուրաց. անշահախնդիր գիտակ իւր կոչման կամ պարտականութեան, մեծանոգի, քաջ և արդարամիտ անա անձնուրաց մարդը. որ իւր հզօր կամքով և հեռատես գործառնութեամբ կրնայ միշտ յաղթող հանդիսանալ։ Այլ չեմ յիշատակեր, իբր աւելի ապացոյց, Դիոգինէսի մարդը. զոր կը փնտռէր նա լապտերով՝ ցորեկ ատեն։

Մենք ունինք այսօր Անդրանիկը. անկեղծ. անշահախնդիր և անձնուրաց. որ գրեթէ միշտ յաջողեցաւ իւր ձեռնարկներուն մէջ. այն ինչ համանման պարագայի մէջ՝ մի ուրիշը չունեցաւ նոյն յաջողութիւնը.

թէ և այդ մի ուրիշն ալ՝ չէր այն չարամիտներէն՝ որոնք յետին մտքերով և ան խոստովանելի նպատակով սպրդած էին հայրենասէրներու շարքին մէջ, Ինչո՞ւ յաջողութեան այս տարբերութիւնը.—պատասխանը պարզ է. վասնզի այդ ուրիշը՝ և դեռ շատ ուրիշներ բացարձակ կամ կատարեալ անձնուրացներ չէին. այնպիսի անձնուրաց՝ որ կ՚ակնարկէ բանտտեղծը։

Այստեղ աւելորդ չէ կապակցաբար յառաջ բերել և՛ գործին պայմանականութիւնը, որ ստէպ կրնայ չէզոքացնել անկեղծ ջանքը. եւ ապարդիւն թողուլ յաջողութեամբ պսակելի գործ մը. այդ է՝ սխալ կերպով ընտրուած գործակցութիւնը։ Հայ յեղափոխական գործին մէջ՝ երբ անհրաժեշտ են Անդրանիկներ, Մուրատներ Կէրէկցեաններ Ղումրիկեաններ եւլն. կուգան, կը միանան իրենց կեանքին մէջ Հայաստանը չի տեսնող զէնք չի բռնող սուր՝ հրացան՝ գնդակ ու պատերազմը բառարաններու մէջ միայն տեսնող պարոններ որոնք համալսարանի, բրոֆէսորի եւ այլ փայլուն բառերու մթերքով եւ պատմականութիւնը՝ որ արդէն փտած, ոչնչացած է, ձեռքերնին բռնած, գործի գլուխ կանգնին, իբր թէ մի ակադէմիա սարքելու համար. . իսկ՚ր Աստուծոյ. ի՞նչ կրսէք, եւ ի՞նչ կընէք. թողուցէ՛ք արհեստաւորին. դերձակը չէ կարող բահ եւ բրիչ չինել. եւ ո՛չ ատաղձագործը կօշիկ. թողուցէ՛ք ասպարէզը գործելու Անդրանիկին եւ Մուրատին, ու անոնց հաւնած համախոհներուն. թող անոնք ձեռք ձեռքի տան, գործին այնպէս՝ ինչպէս որ հաճոյ թուի իրենց. ազգը անսահման վստահութիւն ունի անոնց վրայ, քան ո՛ր եւ իցէ մի կեղրոնի ու պիւրօի վրայ. վասնզի անոնց անձնուրացութիւնը ապացուցուած է։ Անոնք թող քննեն եւ իմանան այն ամենը՝ ինչ որ ցարդ խորհրդաւորապէս գաղտնի կը պահուէր հասարակ հայէն գործին վտանգուելու երկիւղէն։

Ա՛լ ժամանակ է, որ ուղեղ ու միտք չարչարող եւ անհատնում վէճերու տեղի տուող հեռաւոր ու յետին նպատակներ, սոցիալ, տէմօկրատ, պրօլէտարիա, տէրօր եւ այլ հայ ժողովրդին համար դեռ անըմբռնելի խօսքեր ու մտքեր տեղի տան Ազգի, Հայրենիքի եւ եթէ կարելի է կրօնքի իսկ մտքերին նախ բնականօրէն խնդրելի է Լեկանն ու առաջինը, յորմէ յետոյ երկրորդականները ու յաջորդները ինքնին կուգան. ու այս կերպով միայն կարելի կը լինի ազգայնական հողէն արմատախիլ ընել կուսակցական անհասկացողութիւնը, ատելութիւնը, որոնք այ օր ծայր կուտան սոսկալի եղբայրասպանութեան խեղճ անկեալ վիրաւոր եւ ոգեսպառ հայոց թեան սրտին վրայ։ Աւա՜ ասոնք կըսպասենք ազգովին Անդրանիկի եւ Մուրատի նման ճրշմարիտ անձնուրաց՝ երէ. որոնցմով՝ երանի թէ մի օր կարենայինք պարծիլ ըսելով.—Աստուած է վկայ, որ մենք յաղթեցինք երբ որ իբր անձնուրաց զիրար սիրեցինք։

Մ. ՀՍՑԿՈՒՆԻ

ԶԻՍ ԱԼ ՏԱ՛ՐԷՔ

ՀԱՅԴՈՒԿՆԵՐՈՒՆ

Զիս ալ տարէք ես է՛լ կուզեմ ձեզ հետ գալ
Ես խո՛ գիտեմ թէ ուր կերթաք դուք խմբով
Դուք կը գնա՛ք ազգին համար ձեր կեանք տալ
Ես է՛լ կուզեմ Ձեզ հետ մեռնիլ գոհ սրտո՛վ։

Զիս ալ տարէք հայ կորի՛ճք հայ եղբա՛յրք.
Այն երբեմնի դրախտանման մեր վաթան.
Ուր մենք այնքան քաղցրիկ օրեր անցուցինք
Այժմ աւեր արցունք արիւն ու խոպան.

Դուք կը գնաք սրրել անմեղ արցունքներ,
Որք կը թափուին հազար ու իմ աչքերէն՝
Դուք կը գնաք սրրել հայի ճակատէն
Այսքան տարուայ սարկութեան սեւ մուրեր։

Հինգ դար է որ մենք կը հեծենք յամրօրէն՝
Վատ թշնամուն անարդ լպիրշ լուծին տակ.
Դուք կը գնաք կո՛ւռ մղել մարդկոյէն
Զիս ալ տարէք մի՛ թողուք զիս հոս միանակ.

Ա՛հ դուք գիտէք թէ ի՛նչեր կայ իմ սիրտը
Որ զիս այսպէս անգթօրէն կը մաշէ
Երբ կը լսեմ անմեղներու հա՛ռաչը
Կարծես ցլուխս սեւ մութ ամպ մը կը պատէ.

Դո՛ւք կը գնաք այն զուլումի երկիրը.
Ուր ձեր աչով սեսնէք թափուած արիւնը
Դուք պատրաստ էք ուրախ սրտով կեանք տալ
Զիս ալ տարէք ես էլ կուզեմ ձեզ հետ գալ.

Ո՞ւր կարչաւէք իմ ընկերներս սիրելի՞
Ահա՛ ես ճանչցայ տառապանքը մայր երկրի
Թէ հոս Մեամ սիրտս ու հոգիս կը մաշի
Զի Հայրենիք ունիմ յանձնած օտարի։

Զիս ալ տարէք ես է՛լ կուզեմ ձեզ հետ գալ
Ես խո՛ գիտեմ թէ ուր կերթաք դուք խմբով
Դուք կը գնաք ազգին համար ձեր կեանք տալ
Ես է՛լ կուզեմ ձեզ հետ մեռնիլ գոհ սրտով։

ՆԷՇՈՒԷ

Մ. ԱՐԱՄԱԶԴ

ՄԵՐ ՀԱՑ ԹՐՔԱԽՕՍՆԵՐԸ

Կարժէ որ քիչ մը ալ խօսինք մեր անզգայ թրքախօս հայերու մասին։ Մարդ կամչնայ պատուաւոր սրճարան մը երթալ նստելու։ Ամեն սրճարան հայ կայ. եւ ամենքն ալ թուրքերէն կը խօսին, հակառակ պուլկարներու յունարէն եւ թուրքերէն խօսելու արգելումին։ Եթէ պուլկարներու դէպի մեզ լաւ վերաբերմունքը չըլլար, մենք շատ նեղութիւններ պիտի կրէինք։ Մենք հայերս հրէաներէն ալ վար ենք. անոնք երբ տեղ մը հաւաքուին անպատճառ պուլկարերէն կը խօսին. պուլկարները մեզմէ չեն սպասեր կամ չեն պահանջեր որ անպատճառ թուրքերէնի տեղ պուլկարերէն խօսինք, այլ մեր մայրենի լեզուն։ Հաւատացէք քանի քանի անգամներ պատաւաւոր պուլկարներէն լսեր եմ—սա հայերը կածես թուրքեր են, թուրքերը աշխարհիս սէջ չը տեսնուած վայրագութիւնները իրենց բրին, գեռ կը շարունակեն թուրքերէն խօսիլ»։

Փոքր մը ազգային պատուախնդրութիւն պէտք է ունենալ. թուրքերէն չը խօսելով՝ պուլկարներու արգելումին առջեւ չէ որ խոնարհած պիտի ըլլանք։ Քանի որ ունինք լեզու, ու գիտենք՝ ինչու չը գործածենք, մեր լեզուով չը խօսինք։ Մեզ կը մասնաւորեմ «սանդրտլճի» տիարներուն... որ շալունակ թուրքերէն կը խօսին այդ քաֆէին մէջը եւ մեր ցեղը կ՚նպաստաւեն։

* * *

Վերապահութեամբ կը հաղորդեմ թէ. ըստ տարածուած լուրերուն մասնաւոր վայժարանը պիտի գոցուի. ուսուցիչները հեռացած են արդէն. այս տարի մասնաւոր վարժարանը բաւական խոշոր բաց մը ունի. Կովկասի վիճակը շատ խառնակ ըլլալով նպաստ չեն կրցեր հասցնել. այս տեղ հարուստ հայ մը իբր թէ խօսք տուած է եղեր այդ բացը գոցել. սակայն վերջը այդ մտքէն հրաժարած է. որքան ճիշտ է չեմ գիտեր. ըսի արդէն որ այս տեղեկութիւնը վերապահութեամբ կը հաղորդեմ.. Իրողութիւն մըն է որ մասնաւոր դպրոցին վրայ առաջուան գուրգուրանքը չը կայ վերերէն...

Վէհ Մաժ.

Ֆիլիպէ 19 օգոստ.

ՄԱՆԻԱ

3

(Վէպ Հայ Յեղափոխ. կեանքէ)

Նոր ամուսնացած զոյգը շարունակում էր իր կեանքը Մանիան իր ամբողջ սէրը դէպի Մարդավազովը յայտնում էր միայն հորթային քնքշութիւններով. Մարդավազովի սեղանը, ամբողջ բնակարանը. բոգեստները ն յն անկանոնութեան մէջ էին, ինչ որ առաջ էր. կանացի տընարար ջանքի ինամքը չէր նկատվում ոչ բնակարանում եւ ոչ զգեստների վրա.. գուցէ հարցնեն թէ արդեօք Մանիան աւելի լուրջ գործո՞վ էր զբաղված... ոչ. Նա քնանում էր մինչեւ առաւօտեան ժամի տասը. ուտում էր, խմում էր, կիսատ միսատ կարդում էր ոեւէ գիրք ամսագիր կամ թափառում ծանօթ ընկերների մօտ ու չատախօսում.. Մարդավազովի չամուսնացած ընկերները, թէեւ կրկին նիհիլիստների հովերով աւելի կանոնաւոր բնակարան ունէին քան Մարդավազովը... ընկերները մի քանի անգամ Նրան այցելելուց յետոյ՝ այլեւս դադարեցին յաճախելու Մարդավազովը ինչն էլ կամաց կամաց նկատում էր որ Մանիան սէրը շատ միակերպ է. յաճախ ձանձրացուցիչ է տաղտկալի եւ ընկնում լուրջ մտածումների մէջ.. Այդ լուռ մտածկոտութիւնը ի հարկէ չը խուսափեց Մանիայից բայց նա չըմբռնեց կամ չը կարողացաւ ըմբռնելը։

Մի օր, երբ Մարդավազովը մի ժամից աւելի սենեակում նստած մի խօսք չէր փոխանակել Մանիայի հետ. վերջինս յանկարծ մօտեցաւ Նրան եւ վզին փարելով՝ յայտարարեց «գիտես Մարկոս, յղի եմ. մենք զաւակ պէտք է ունենանք։

Մարկոսը իր կողմից ուրախացաւ, ու աչքերը մխելով Մանիայի կանաչ աչքերի մէջ... նկատեց.

—Շատ ուրախ եմ, բայց պէտք է կարողանա՞ս դու մայրութիւն անել. այդ բառի բուն իմաստով։

—Ինչո՞ւ չէ...

—Տեսնենք. առարկեց Մարդավազովը, ու կրկին աչքերը գրքին դարձնելով սկսեց կարդալը բայց ոչ թէ կարդում, այլ գրքին նայելով մտածում էր.

—Գուցէ զաւակը թարմութիւն մտցնէ մեր այս կեանքի մէջ, որը մի քանի ամսում արդէն հնացաւ. կորցրեց ամէն անուշութիւն. իսկ եթէ զաւակի գոյութիւնը գոնէ աւելի դժուարացնէ. եթէ Նրա գոյութիւնը ստիպէ ինձ յաւիտենապէս կապված մնալ այս կնոջ հետ. որը բոլորովին իմ երեւակայածի նման չէ եղել. ու դեռ կարող է աւելի մեծ թերութիւններ արտայայտել.. այն ժամանակ ինչ կը լինի իմ վիճակը..

Մանիան Մարդավազովի կողքին կանգնած՝ դիտում էր Նրան. Նա նկատեց որ երիտասարդի աչքերը գրքի սիեւնոյն էջի վրա էին մխված. հասկացաւ որ չէ կարդում՝ միջամըտեց.

—Բայց դու չես կարդում. կրկին մտածում ես. ինչի՞ մասին ես մտածում. մի՞թէ յղի լինելս քեզ ուրախութեան փոխարէն ծանր մտածումներ է պատճառում։

—Ոչ ծանր, ընդհակառակը ես երազում եմ թէ ինչպէս նոր աշխարհ եկողին պէտք է սիրենք. դաստիարակենք. կեանքի պայքարի մէջ մաքուր, բարձր իդեալներով մանելու. պայքարելու մարդ պատրաստենք. եւ մտածում եմ թէ ի՞նչպէս պիտի ոսվորի մի լեզում. քանի որ աւելի քեզ հետ

ՏԽՈՒՐ ԲԱՐՔԵՐ

Գ.

ՁՐԻ ԱԶԳԱՍԷՐՆԵՐԸ

Մեր ազգային կեանքին մէջ՝ մասնիչներէն, դաւաճաններէն, ազգադաւվատերէն, եւ հակայեղափոխականներէն ու շառլաթաններէն ետք ամենէն սխուր՝ զզուելի եւ միանգամայն գարշանք յարուցանող գաւակարգը կը կազմեն «ձրի ազգասէրները»։

Ամէն տեղ ըլլայ Հայաստան։ Ըլլայ Արտասահման, եւ նոյն իսկ հոս Ամերիկա, խմբերով կը վխտան անոնք, տասնեակներով կրնամ նշուել՝ եւ մատնանշել ալ ;

Ձպիտի ուզէի տող մը անգամ նուիրել ասոնց. եթէ այս խմբակն ալ իր կարգին՝ մասնաւոր տեղ մը դրաւած չըլլար. մեր ազգային կեանքին մէջ։ Եւ չէ՞ մի որ «խուր բարքերը» աղնուացնելու դժուարին գործին նպաստել յանձնառի. պէտք է որ քանի մը խօսք ալ ասոնց մասին գրեմ։

Գիտեմ, եւ վստահ եմ որ՝ երբ նշտարը վերջին դպցնեմ շատեր պիտի բարկանան, եւ բերաններէն փրփուրով լեցնեն՝ ու ակռայ կռճտեցնեն լիծի, բայց ի՞նչ փոյթ այդ բոլորը. եթէ նոյն իսկ կապրի, եւ սպառնալիքներ ալ ընեն՝ կրկին հոգ չէ. որովհետեւ անհատներ. կամ խումբեր վիրաւորելու տենչէն մղուելով չէ որ կընեմ, այլ անոնց այս կամ այն թերութիւնը մատնանշելու՝ եւ վերջերը բուժուած տեսնելու սիրակ մտահոգութիւնն է որ զիս կը մղէ այս քայլը առնելու։

Ուրեմն որքան կուզեն թո՛ղ բարկանան, եւ կուշտ կուշտ հայհոյեն, որքան կուզեն թող պոռան ու ճչան եւ սպառնալիքներ տեղացնեն իմ հասցէին, այդ իրենց դիտնալիք բանն է։ Անոնք թող իրենց տխուր դերը շարունակեն, ես ալ իմ դժուարին գործս։

„Ձրի Ազգասէներ» ըսի, ընթերցող. եւ դուն անշուշտ կսպասես որ քեզի բացատրեմ, բայց չեմ ուզեր քեզ ձանձրացնել ինչու որ դուն ալ ինծի չափ ծանօթ ես անոնց որովհետեւ քու բոլոլաքդ ալ կը վխտան անոնք, ուրեմն քիչիկ մը ուշի-ուշով նայիր. եւ դուն շատ շուտով պիտի տեսնես. թէ որո՞նք են իմ «Ձրի Ազգասէրներս» կոչածներս։

Մտի՛ր ճաշարան մը, կամ սրճարան մը. եւ քիչ մը մտիկ ըրէ, ականջ տուր անոնց խօսուածքներուն, եւ եթէ մէկ անգամով չը կրցիր անոնց հոգերանութիւնը ըմբռնել, անգամ մը եւս շարունակէ. եւ դուն շատ շուտով կը համոզուիս իմ շտածիս ճշմարտութեանը։

Մի՛ զարմանար, մի՛ ալ խնդար, եւ ո՛չ ալ զայրացիր։ «Ա՛խ, ամբողջ Հայաստանը արիւնի ծով է դարձեր, բռնապետութիւնը իր բոլոր ուժերը լարած, կը փորձէ վերջին հարուածը տալ. մենք ալ մարդ ենք. մենք ալ ազգ ենք, պէտք է կռուինք կեցցե՛ս յեղափոխականները։ Կա՛ այդպէս ընելու է, կա՛մ սեռնելու է, կամ սեռցնելու է։» Ուրեմն. եւ ուրեմն. ու այսպէս անվերջ խօսքեր, կը լլլցնեն իրենց բերաններուն մէջ. կը հիանան յեղափոխականներու ըլլած զոհողութիւններուն վրայ. կատե՛ն մեր ազգային բոլոր թշնամիները, օ՜ որքան կը հայոյեն Թիւրքին եւ Ռուսին, սակայն փորձէ անգամ մը, եւ ազգային ո՛ւ՛ է բարեսիրական գործի մը դամար դիմում ըլլ անոր, ըսելով «Հայրենակի՛ց, լիրեւ հայ, նկատի ունենալով որ դուք ալ նախանձախնդիր էք մեր ազգային պատուին, եւ կզգաք սիանգամայն թէ՝ պարտականութիւն մը ունիք կատարելու հանդէպ ազգային աս ու ան բալեւիրական գործին. կը դիմենք ձեզի ալ՝ որպէսզի դուք ալ ձեր լուման բերէք սիացուցէք մերինին» եւն. եւն։

Սիլտգ պինդ բռնէ. եւ քարի պէս պաղ ու անտարբեր պատասխանին առջեւ սի սահմռկիր. եւ ականջ դիրու լսէ. «աղբա՛ր. ի՞նչ է. ի՞նչ է որ ըսել կուզէք չեմ հասկնար, ա՛ս աղքատախնամին համար է դրամ տուր, աս յեղափոխութեան համար է տուր աս կովկասի կարօտեալներուն է տուր. աս Վասպուրականի կամ ուրիշ գաւառներու սովեալներուն համար է տուր տուր, ու տուր. ես ո՞ր մէկին պիտի տամ. չեմ հասկնար, երանի՛ կամ մէկէն ամէնքն ալ լմննային պլծէինք. կամ թէ (այս անգամ տարբեր լեզուով կը խօսի, կը սկսի, բոլորին մասին ալ դէշ խօսել, «ե՞ս պիտի պահեմ օտարին որբերը. թող սրբ չըլլային» ու դառնալով յեղափոխականներուն ինքզինքը արդարացնելու համար, կը պոռայ „դրամ չեմ տար. բոլորն ալ խաչագողներ են» եւն. եւն։

Մինչդեռ, եթէ դրամի զոհողութեան խնդիրը չըլլար. թէ՛ որբերը եւ թէ յեղափոխականները բոլորն ալ լաւ էին։

Եւ զուր տեղը չէ որ անմոռանալի բանաստեղծը Դամառ-Քաթիպա երգած է.

«Ա՛խ ինչպէս կուզեմ տեսնել մեր հային
Ազատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ
Մէջն հայի տուն-դրախտ երկնային..
Լոկ այդ բանն ինձմից չուզենար մէկ զոհ...
Ա՛խ, ինչպէ՛ս կուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատուած թշնամու ձեռքէն.
Հայի երկիրը—հայի սեփական...
Լոկ այդ չի բաւիներ ինձ իմ կոպէկէ՝»...

Գարշելի եւ սիրտ խլխլացնող տիպեր են մեր «Ձրի ազգասէրները» ու ինչ լոկ խօսքով կը բաւականանան ու որոնք ինչպէս ըսի կը վխտան ամէն տեղ ալ։

Ու դժբաղդաբար այս սինլքորները երբեմն երբեմն կերեւին մեր յեղափոխական շարքերուն մէջ ալ։

Երկու շաբաթ առաջ էր որ Հ... քաղաքէն բարեկամս Ա. Կոլիւն ինծի վրկեց չրջաբերականը Դամանթուղթ մը որ երբ կարդացի, ճիշդն ըսելով բոլորովին հիասթափուեցայ, որովհետեւ չէի կարծեր որ այդքան ալ թնկածներ, եւ բառիս բուն նշանակութեամբ «Ձրի ազգասէրներ» կրնան զոյութիւն ունեցած ըլլալ մեր յեղափոխական շարքերուն մէջ։

Խորհելով որ այդ «չրջաբերականը» կրնայ հետաքրքիր ըլլալ ընթերցողներուն, իր ամբողջութեամբը կը դնեմ հոս ;

Շրջաբերականին պատկանած կուսակցութիւնն ու անոր դրութիւնը չէ ինծի շահագրգռողը. այլ մեր իրենք-զիրենք յեղափոխական—կամ սրպէսզի իրենց «խաթն ալ խօշ ըլլայ— ըսեմ ընկերվարական յարիղներու բառին ասենալայն իմաստովը «ձրի ազգասէր» ըլլալը։

Շրջաբերականը թէեւ քիչ մը հին՝ բայց փաստը փաստ է—ու ահա բառ առ բառ ;

Թիւ 5 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հնչ. կուս. Ամերիկայի Մասնաճիւղերին

Սիրելի Ընկերներ.

Գործ. Ցանձնախումբս պաշտօնի սկսելէն անմիջապէս յետոյ, կարգ մը շրջաբերականներով շատ որոշ կերպով պարզեց Ձեզ երկրի ներկայ նոր-շանակալից դրութիւնը ու անյետաձգելի պահանջները, մատնանիշ ընելով՝ կոչ ըրաւ մեր մասնաճիւղերին որ փութան անյապաղ կատարել իրենց պարտականութիւնը, եկաւ կեդրոնի շրջաբերականը՝ որը սեւելի ընդարձակ աւելի յստակ կերպով պարզեց երկրի ներկայ պատմական խիստ մեծ նշանակութիւնը իմաստը եւ անոնց անմիջական անյետաձգելի պահանջները. կոչ ընելով որ մասնաճիւղերը փութան կատարել իրենց պարտականութիւնները։ Սակայն այժմ սրտի դառն կսկիծով ստիպուած ենք յայտարարել որ՝ այն բոլորը մնացին անարձագանգ մեր մասնաճիւղերի կողմէն. եւ մեր մասնաճիւղերը նոյն իսկ իրենց պիտճէի բաժին ալ չի հասցուցին ցարդ Գործ. Ցանձնախմբիս, ու այդպէս իրենց դատապարտելի անտարբերութեամբը կաշկանդեցին Գործ Ցանձնախմբիս գործունէութիւնը եւ զայն դրին մէկ անէլ դրութեան մէջ։

Իրե՛ի այս խիստ աննախանձելի վիճակին վերջ մը տալու համար Գործ. Ցանձնախումբս իր վերջին նիստին մէջ երկար խորհրդակցութենէ յետոյ որոշեց ներկայ շրջաբերականով իր հաւաքական հրաժարականը դնել մասնաճիւղերուն առջեւ հետեւեալ պայմաններով. առաջին՝ անհրաժեշտ է որ մասնաճիւղերը՝ անխտիր իրենց թէ պիտճէի եւ թէ «Ե. Հ.»ի պարտքերնին անյապաղ ամբողջովին հասցնեն մեզ, որով միայն Գործ. Ցանձնախումբն ի վիճակի պիտի ըլլայ այնչափ անյետաձգելի ընդհանուր հանգանակութեան գործը յառաջ տանել, աշխատել Մասնաճիւղեր կազմել այն տեղերը՝ ուրտեղ Մասնաճիւղեր չկան զօրացնել սակաւ մասնաճիւղերը. եւ հնարաւոր ու գրծնական միջոցներով ուսումնասիրել Ամերիկայի մեր մասնաճիւղերի իրական վիճակը՝ եւ գտնել զանոնք Հնչ. սկզբունքներուն համապատասխան ներդաշնակութեան մէջ. եւն.

Հակառակ պարագային՝ այսինքն՝ եթէ մեր մասնաճիւղերը ներկայ թիւս մինչեւ երկու շաբաթ իրենց թէ՛ պիտճէի եւ թէ՛ թերթի պարտքերը մեզ չեն հասցներ. եւ այդպիսի մասնաճիւղերի թիւը կը հասնի մեծամասնութեան, այդ պարագային պէտք է լինի։

—Հա, այժմեանից լեզուի մասին ես մտածում, ի հարկէ նա կը սովրի այն լեզուն, որով մայրն է խօսում. եւ հայրն է խօսում ինձ հետ։ Մեր տան մէջ ուրիշ լեզու չը կայ որ. քո հայ ընկերներն էլ քեզ հետ, ոչ միայն մեզ մօտ, այլ ամէն տեղ ռուսերէն են խօսում. մինչեւ հիմա քեզ համար լեզուն կարեւորութիւն չէ ունեցել, ինչպէս այսօր յանկարծ միտքդ ընկաւ այդ վաղուց ի վեր մոռացված լեզուն...

—Ես էլ չը գիտեմ Մանիա. թերեւս բնազդմամբ, ցեղի պահպանման կնճռոտ, բայց բնական այդ հարցը արթնեց իմ մէջ.

Մարդավազովը դեռ խօսքը չէր վերջացրել՝ երբ դուռը բացվեց ու ներս մտաւ միջահասակ, շատ սեւ, երկար ոտքերով հայ երիտասարդ, ու ընդհանուր բարեւ տալուց յետոյ դիմեց Մարդավազովին.

—Եղբայր, մի ժամից աւելի է որ քեզ ենք սպասում. ժողովականները ձանձրացան. Եւրոպայից եկած պատգամաւորը էլ չէր ուզում սպասել հազիւ պահել ենք. վեր կաց գնանք. գիրք ես կարդում, ինչ կարդալու ժամանակ է։

Մարդավազովը իսկոյն տեղիցը վեր կացաւ, սկսեց գլխարկը փընտռել։

Մանիան որ հայելէն ժողով բառի իմաստը գիտէր, նկատեց, ռուսերէն։

—Էլ ինչ ժողով է այդ. ես զարմանում եմ որ ձեզ նման լուրջ, գիտակից մարդիկ դեռ կարողանում են հայկական ոչ միայն ժողովներով այլ եւ խնդրով զբաղվել. միթէ դուք հաւատում էք որ հայերը կարող են երբ եւ իցէ ազատվել, դադարկ բաներ.. ձեր ժողովների պատճառով Մարկոսն էլ տունը չէ կարողանում մի ժամից աւելի նստել։

—Ես ձեր կայծիքները հայկական խնդրի եւ մեր ժողովների մասին բոլորովին լսելու արժանի չունեմ, եւ չեմ էլ հրցնում. պատասխանեց Միսակեանը, Մարդավազովին հրաւիրող ելիսաւարդը իր ածուխի պէս սեւ աչքերը խոժոռելով. միայն ինձ զարմացնում է մի բան. դուք դեռ Մարկոսի հետ ապրել չըսկսած հետաքրքրվում էիք թէ հայկական խնդրով եւ թէ մեր ժողովներով։ Արդեօք ձեր այդ նախկին հետաքրքրութիւնը միայն որոշ նպատակի հասնելու համար էր Հասնելուց յետոյ ամեն ինչ վերջացաւ...

—Բայց պարոն Միսակեան դուք շատ էք առաջ գնում... մոռանում էք որ իմ տան մէջ էք գանվում, կատաղած նկատեց Մանիան։

—Ոչ, ես չեմ մոռանում թէ իմ ընկեր Մարդավազովի տանն եմ գտնվում...

Լսո՞ւմ էք, պարոն Մարդավազով, ինչ է ասում պարոն Միսակեանը.

—Ի հարկէ լսում եմ, շատ բարձրաձայն է խօսում. էհ, ես գնում եմ. ճաչին կարելի է որ չըգամ, ինձ չսպասես, բարկանալու պատճառ չը կայ. իզուր ես քեզ անհանգստացնում Մանիա. ցը տեսութիւն. այս ասելով Մարդավազովը Միսակեանի հետ դուրս եկաւ, իսկ Մանիան չըթունքները կրծոտելով կանգնած տեղում մնաց... ապա չանթոտ մի նայուածք գցելով՝ գնացողների ետեւից ընչաց թեղդված ձայնով։

—Շատ լաւ, թող երեխան ծնվի. յետոյ կը խօսեմ ես ձեզ հետ։

ՎԱՐՈ

(Շարունակելի)



Գործ. յանձնախումբս պիտի համարի իր հրաժարականը ընդունուած՝ եւ անմիջապէս պիտի հրաւիրէ արտակարգ պատգ. ժողով. երկրի ներկայ դրութեան դարման տանելու եւ նոր Գործ. Յանձնախումբ ընտրելու համար։

Երկրորդ՝ եթէ մասնաճիւղեր իրենց բոլոր պարտքերը ղրկէն յետոյ, Գործ. յանձնախումբս գոյացած գումարը անբաւական գտնէ տեղական պահանջներին, իրաւունք պիտի ունենայ պլեւնայի վրայ նոր յաւելում ընելու եւ պահանջելու մասնաճիւղերէն որը նոյնպէս պէտք է շուտով վճարեն։

Արտակարգ Պատգ. ժողովի տեղին համար պիտի ընդունինք մասնաճիւղերի կողմէն եղած թելադրութիւններ, այլապէս գործ. յանձնախումբս ազատ պիտի ըլլայ ինչպէս ժողովի տեղը ինքը որոշել։

Սրտագին բարեւներով

Ի դիմաց Ասելիկայի Հնչ. մասն.
Գործ. յանձն.

Ատենադպիր Ատենապետ
Կ. Մարտիկեան Վարդան Խանիկ

(Կնիք)

16 մարտ, 1905

Չեմ ուզեր ո եւ է սեկնաբանութիւն ընել, քանի որ «շրջաբերականը» շատ լաւ կերպով բացատրած է ինքզինքը. կուզեմ աւելցնել սակայն որ «շար լեզուները» կը թօսին որ Հնչակեան (Դրն) կուսակցութիւնը Ասորիկայի մէջ 500 տալեռէ աւելի (2500 ֆրանք) պարտք մը ունի որ տարուէ տարի գործ. յանձնախումբերը կը յանձնեն իրարու։

Հասկցա՞ր Դիմա Սիրելի ընթերցող՝ թէ մեր մէջ «ձրի ազգասէրներու թիւը սրքան շատ է, ու առատ՝ որ ինչպէս ըսի անոնք կը վխտան հանրային բոլոր ասպարէզներուն մէջ ալ։

Ախ, ե՞րբ վերջ պիտի գտնեն «ձրի ազգասէրները», ե՞րբ պիտի զգան և տասկնան ու ըմբռնեն որ «ձրի ազգասիրութիւնը» դաւաճանութեան չափ եւ թերեւս քիչ մըն ալ անկէ աւելի յանցանք է։

Մեր հայրենիքը պէտք չունի «ձրի ազգասէրներու»։ Մեր հայրենիքին մարդիկ հարկաւոր են որ խոսքէն աւելի նախընտրեն գործը կենդանի գործը։

Ժամանակն է եւ գուցէ քիչ մըն ալ ուշ. որ մեր «ձրի ազգասէրները» իրենք ալ ըմբռնեն մեր հայրենիքին սպառնացող վտանգը եւ խոսքէն անցնին գործին։

Մեր «ձրի ազգասէրներ» Թորոս աղբարն, Ծխիս էմին վերջ տալու են իրենց զուէլի ընթացքին, եթէ չեն ուզեր որ ապագայ պատմութիւնը դրոշմէ իրենց ճակտին «Դաւաճաններ» արտդրոսը։

Այսքան պարզ ճշմարտութիւն մը հասկնալու են։

Բարկէն Սարհատեան

Նեղուէ (Ամերիկա)

ՄԻ ԴԱՍ

Վառնայի ուսուցչական ժողովի մասին «Իրաւունքի» լրագրում Մ. Ստորագրութեամբ մի անհամ գիտողութիւն կարդացի, որի քողարկուած գրիչը զարմանում էր, թէ ինչո՞ւ ուսուցիչները ժողովի չէին հրաւիրել և հոգաբարձուներին, հետեւաբար և մանրավաճառներին, և՝ կերպասածախսին և՝ մեքենագործին եւն։ Եւ զարմանալի գտնելով այդպիսի մի համագումար, բը զաւում էր, թէ կօշկակարներն ինչո՞ւ այդպէս չէին անում եւն։ Կօշկակարի և ուսուցչի տարբերութիւնը չիմացող մի էակը, զարմանում ենք, ի՞նչպէս յանդգնում է կոճառորդի դեր ստանձնել, և իւր կրածը տպագրել տալ լրագրի էջերում... աշխարհ է, է՞... իսկ այն մտքին թէ ուսուցչական ժողովը ժողովրդի վրայ տարեկան 800 ֆրանքի մի բեռն է դրել, շատ սըխալ է։ ուսուցիչներ իրանց իրաւունքի 2 0/0 զոհում են լրագրի, ծրագրի և այլ ծախսերի համար և իրանց հրատարակելի լրագրին իրանք միայն բաժանորդ լինելով՝ նորից միայն ծախսի են ենթարկում անձնապէս։ Եւ եթէ մի երկու տեղ տարին մի մի ներկայացում լինի յօգուտ այդ միութեան, կարծում ենք որ դրանից էլ մի մեծ բան չի գոյանալ. և թէ որ և իցէ մի թատրոն իրա ներկայացումի արդիւնքը նորից չէ բաժանում ուկնդիր հանդիսատեսներին։ Ուրեմն ներկայացումների հասոյթն էլ անարդար չի լինիլ։ եթէ ուսուցիչների գըրպանը մտնէ. սակայն նրանք զայդ էլ իրանց դրամի հետ տալիս են ազգին... Իսկական առածն ասում է «լովառ լա թէսթա տի ազինօ»։ Հասկացողին բաւ է։

Պապիկ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Էջմիածնում արդէն սկսուած է համազգային համագումարը։

— Վեհափառի դէմ ըմբոստացող կղերները, եկեղեցական սահմանադրութիւն տալուն պատճառով, նոր գրութիւնով մը կը չբաւեն մեղեն իրենց արարքը և կը խնդրեն որ կղերն ալ ներկայացուցիչներ ունենայ ազգային համագումարին մէջ։

— Աւելցալ չարաթ երեկոյեան ներկայացումին, ի նպաստ Վասպուրականի սովեալներուն, մօտ հինգ հարիւր ֆրանք գոյացած է, զուտ հասոյթ։ Հարուստներուն տոմսակներ չէ ծախուած, որով հետեւ նպաստակ կայ անոնցմէ հանդգնակութեամբ դրամ հաւաքել—անշուշտ Վառնայի հայ ունեւորները չը պիտի թերանան իրենց պարտականութեան մէջ դէպի իրենց սովատանջ եղբայրները։

— Սուլթանի տարեդարձին առթիւ շատ մը հայեր ձերբակալուած են, ոմանք ալ համոզուած ըլլալով որ պիտի ձերբակալուին իրենք իրենց ոտքով գացած և ոստիկանութեան յանձնուած են։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ ներկայացուցիչ պարոն Նուշեիշ արդէն Սոֆիա վերադարձած է։

«Վէշերնա Բոշթա» թերթը նախարարապետ Բեթրովի մէկ հեռագիրը հրատարակած է, որով նախարարապետը ներքին դրծոց նախարար Բեթքովի կը հաղորդէ թէ ամբողջ դահլիճին կոյմէ հրաժարական տուած է իշխանին։

— Իշխանը շուտով Սոֆիա կը ապաստի։

— Կառավարութիւնը Սուլթանէն նօթա մը ընդունած է, որով կը հաղորդուի թէ՝ եթէ Պուլկարիան շարունակէ պատերազմական պատրաստութիւններ տեսնել Թուրքիա ալ պիտի սկսի։

— Ցունաց Պատրիարքը Իշխանին բողոքագիր մը ղրկած է, պուլկար յունական դէպքերուառթիւ, Իշխանը իմացնել տուած է որ այդ ստալոգ ամբաստանագիրին պատասխանելու տրամադիր չէ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Սուլթանը ներկայ եղեր է և վերջին Սէլամլիքին, պալատի մէջ ընդուներ է իր բարձր պաշտօնեաներուն շնորհաւորութիւնը սակայն ամենքն ալ կը նկատեն որ Սուլթանը շատ թոյլ է։

— Սէլամլիքի արարողութեան կրցեր են ներկայ գտնուիլ բոլոր պետութեան դեսպանատներէն յանձնարարուած անձերը, բացի պուլկարականէն։

— Անգլիական կառավարութիւնը կառաջարկէ որ Մակեդոնիոյ օթոնոմի տրուի. այդ առաջարկութիւնը ընդունած չեն Ֆրանսա և Իտալիա, կը հակառակին Գերմանիա և Աւստրիա, իսկ Ռուսիա դեռ որոշ պատասխան մը չէ տուած։

— Սուլթանը կաշխատի Արաբիոյ ապստամբութիւնը լմնցնել ապստամբութեան ղեկավարները կաշառելով։

ՌՈՒՍԻԱ

«Նովոյէ Վրէմիա» թերթը կը պնդէ թէ կառավարութիւնը որոշած է պետական կենդանական վարչութիւններու կազմակերպութեան ձեւը փոխել—ապագայ Տումայի հաւանութիւնը ստանալէն յետոյ։

— Սէմէնովսքի գունդին պետ զօրավար Մինքշպանող Օրիորդ Լարիոնովոֆ պիտի դատուի պատերազմական ատեանով։

— Սոսիալ տէմոկրատներու կուսակցութիւնը այս անգամ վճռած է եռանդուն կերպով մասնակցիլ Դումայի ընտրութիւններուն։

— Պէրլինեան թերթի մը Բեթերսպուրկէն կը հաղորդեն թէ նախարարապետի կեանքի դէմ եղած փորձէն վերջ ոստիկանութիւնը ձեռք առցուցած է դաւադիրներու կարեւոր ցանկ մը, որոնք մասնակցածեն վերջերստեղի ունեցած բոլոր մահափորձերուն։

— Վիէննայի թերթերէն մին Բեթերսպուրկէ կիմանայ թէ սոսիալիստ յեղափոխականները յայտարարած են որ իրենք չեն Ստոլիպինի մահափորձին հեղինակները։

— Ռուս պուլկարական միջադէպը վերջացած է պուլկար դեսպանին տուած բացատրութիւնները գոհացուցիչ ըլլալուն պատճառով։ Ռուս կառավարութիւնը հրամայած է Սոֆիաի դեսպանին վերսկսել իր յարաբերութիւնները պուլկար նախարարութեան հետ։

— Նախարարապետ Ստոլիպին իր մահափորձէն յետոյ միայն անցեալ օր ներկայացեր է Ցարին և իբր թէ կարծիք յայտներ է որ ազատական բարենորոգումները անհրաժեշտ են։ Ստոլիպին նաև ցանկութիւն յայտնած է հրաժարիլ, սակայն Ցարը մերժած է։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պոլսէն կը հաղորդեն թէ թուրք պարսկական սահմանագլխին խնդիրը կարգադրելու համար երկուստեք կազմուած յանձնախմբերը դեռ իրարու հանդիպած չեն, թէեւ իրարու շատ մօտիկ կը գտնուին։

Պարսիկ յանձնախումբը մերժած է թուրք յանձնախմբին հետ բանակցութեան մէջ մտնել քանի դեռ թուրք զօրքերը չեն հեռացած պարսկական հողէն. թուրքերը օգտուելով Պարսկաստանի խառն վիճակէն ամուր նստած են գրաւած տեղերուն վրայ։

ՉԻՆԱՍՏԱՆ

Կայսրը հրովարտակով մը իր հպատակներուն կը խոստանայ վարչական բարենորոգումներ։ Հրովարտակը կը հաստատէ նաև որ Սահմանադրութիւն պիտի տրուի երբ ժողովուրդը այնչափ հասունցայ, որ կարենայ ըմբռնել զինքը իշխանութեան հետ կապող կապերը։ Ուրեմն Պարսկաստանի հետ Չինաստան ալ կուգայ ռուս միապետութիւնը գերազանցելու իր ազատական ոգիով։

Печатница на П. Глушковъ С Вар